

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

2021 թ. Օգոստոսի 31-ին տեղի ունեցավ հոգեբանության ամբիոնի նիստը  
Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. 2021-2022 ուս. տարվա ամբիոնի առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների վերանայում ու հաստատում
2. Հեռակա և առկա ուսուցման քննությունների ընդունում և պարտքերի մարում, արդյունքների վերլուծություն
3. Պրակտիկայի արդյունավետ կազմակերպման և անցկացման վերաբերյալ առաջարկությունների քննարկում և առարկայի նկարագրի ներկայացում:
4. Ընթացիկ հարցերի քննարկում

**Լ Ս Ե Ց Ի Ն՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը 2021-2022 ուս տարվա առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, միջանկյալ և ամփոփիչ հարցաշարերի մասին:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** հգթ, դոցենտ Հ. Պետրոսյանը, հգթ, դոցենտ Լ. Արամյանը, հ.գ.թ., դոցենտ Վ. Քոսակյանը, հ.գ.թ., դոցենտ Մ. Միքայելյանը: Նշեցին, որ առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները պատրաստ են:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** վերհաստատել առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, միջանկյալ և ամփոփիչ քննությունների հարցաշարերը և մինչև 05.09.2021թ. տեղադրել Google Classroom հարթակներում:

**Լ Ս Ե Ց Ի Ն՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի և հ.գ.թ., դոցենտ Եվ. Հովհաննիսյանի հաղորդումը 2021-2022 ուս. տարվա առկա բակալավր համակարգի 3-րդ կուրս հոգեբանության մասնագիտության 1-ին կիսամյակի պրակտիկաների մեկնարկի մասին:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** Նշվեց, որ ներկա պահին կազմված են պրակտիկայի առարկայական նկարագրերը, պրակտիկայի դպրոցների ցանկը և առաջիկայում կկազմվեն պրակտիկայի հրամանները:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** Մանկավարժական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

**Լ Ս Ե Ց Ի Ն՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը հեռակա ուսուցման երկրորդ կիսամյակի ընթացքի վերաբերյալ:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** հ.գ.թ., դոցենտ Վ. Քոսակյանը, հ.գ.թ., ասիստենտ Ս. Քելոյանը, հ.գ.թ., ասիստենտ Լ. Վարդանյանը և հ.գ.թ., դոցենտ Լ. Մկրտումյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** լինել առավել հետևողական և պահանջկոտ քննաշրջանների նկատմամբ:

**Լ Ս Ե Ց Ի Ն՝** 2021-2022 ուս. տարում առկա համակարգի Google Classroom հարթակում դասախոսների ակտիվության մշտադիտարկման բաղադրիչների քննարկման հարցը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** հ.գ.թ. դոցենտ Լ. Արամյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Լաչինյանը, դասախոս Ն. Հարությունյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** 2020-2021 ուս. տարում առկա համակարգում առաջնորդվել Google Classroom հարթակում դասախոսների մշտադիտարկման հետևյալ բաղադրիչներով.

- ✓ Առարկայական նկարագրի տեղադրում - 10%
- ✓ Թեմատիկ տրոհում - 20%
- ✓ Դասախոսությունների առկայություն - 50%
- ✓ Գնահատվող հանձնարարությունների տեղադրում (1 կամ 2 աշխատանք) - 20%

**Ը Ն Թ Ա Ց Ի Կ Հ Ա Ր Ց Ե Ր Ի Ք Ն Ն Ա Ր Կ ՈՒ Մ՝** արտահայտվեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, մտահոգություն հայտնեց հոգեբանություն մասնագիտության ուսումնական պլանում առկա որոշ խնդիրների մասին /առարկաների տրամաբանական հաջորդականություն, ժամեր և այլն/, առաջարկեց այս կիսամյակի առաջիկա նիստերից մեկում քննարկել այդ հարցը:

**Հոգեբանության ամբիոնի վարիչի պ/կ՝  
Քարտուղար՝**

**Լ.Կ. Սարգսյան  
Ա.Վ. Խաչատրյան**

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N2

2021 թ. Սեպտեմբերի 27-ին տեղի ունեցավ հոգեբանության ամբիոնի նիստը  
Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. 2021-2022 ուս. տարվա մագիստրոսական թեզերի, բակալավրիատի ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում, ղեկավարների նշանակում:

2. 2021-2022 ուս. տարվա մագիստրոսական թեզերի, բակալավրիատի ավարտական և կուրսային աշխատանքների ամբիոնի կողմից ներկայացվող պահանջների քննարկում և հաստատում:

3. Հեռակա և առկա ուսուցման քննությունների ընդունում և պարտքերի մարում, արդյունքների վերլուծություն:

4. Ամբիոնի 2021-22 ուս. տարվա աշխատանքների պլանի հաստատում:

5. Դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման, կոլեկտիվ հրատարակությունների կազմակերպման հարցի քննարկում:

6. Ասպիրանտների և հայցորդների թեմաների վերաբերյալ հաղորդումներ:

7. Ընթացիկ հարցերի քննարկում:

Լ Ս Ե Ց Ի Ն՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը 2021-2022 ուս. տարվա մագիստրոսական թեզերի, բակալավրիատի ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների վերաբերյալ:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը, հ.գ.թ., դոցենտ Մ. Միքայելյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը: Նշեցին, որ թեմաները ամբիոն են ուղարկվել մինչև ս/թ սեպտեմբերի 9-ը, ինչից հետո թեմաները քննարկվել են ղեկավարների հետ և որոշ շտկումներ և փոփոխություններ են իրականացվել, որոշ թեմաների ավելացվել են հետազոտական հատվածներ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝ հաստատել 2021-2022 ուս. տարվա մագիստրոսական թեզերի, բակալավրիատի ավարտական և կուրսային աշխատանքների խորագրերը:

Լ Ս Ե Ց Ի Ն՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը 2021-2022 ուս. տարվա մագիստրոսական թեզերի, բակալավրիատի

ավարտական և կուրսային աշխատանքների ամբիոնի կողմից ներկայացվող պահանջների մասին:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն**՝ հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Մ. Միքայելյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Քուրքչյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը, նշեցին որ 1-ին կիսամյակի կուրսային աշխատանքների պահանջների մեջ հարկ է փոփոխություններ կատարել և առաջին անգամ կուրսային աշխատանք գրող ուսանողից «վարկած» չպահանջել: Հարցը քննարկվեց և դրվեց բաց քվեարկության: Նիստի ներկա 16 դասախոսներից 11-ը քվեարկեցին կողմ, 2-ը դեմ, 2-ը ձեռնպահ:

Նշվեց նաև, որ ուսումնասիրվել են մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պահանջները: 2021-2022 ուս. տարվա մագիստրոսական թեզերի, բակալավրիատի ավարտական և կուրսային աշխատանքների ամբիոնի կողմից ներկայացվող պահանջների հաստատման համար անցկացվեց բաց քվեարկություն: Նիստին ներկա 16 դասախոսներից 14-ը քվեարկեցին կողմ, 2-ը ձեռնպահ:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն**՝ 2021-2022 ուս. տարվա մագիստրոսական թեզերի, բակալավրիատի ավարտական և կուրսային աշխատանքների ամբիոնի կողմից ներկայացվող պահանջներում կատարել մասնակի փոփոխություն՝ կապված առաջին կիսամյակի կուրսային աշխատանքների հետ և հաստատել:

**Լ Ս Ե Ց Ի Ն**՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը 2021-2022 ուս. Տարվա ամբիոնի աշխատանքների պլանի մասին:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն**՝ հ.գ.թ., դոցենտ Ս. Մակիչյանը, հ.գ.թ., դոցենտ ԵՎ. Հովհաննիսյանը. նշեցին, որ ծանոթցել են աշխատանքային պլանին: Աշխատանքային պլանը կազմված է ըստ ուսումնական գտործըթացի և բավարարում է ուս. տարվա պահանջներին:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն**՝ հաստատել 2021-2022 ուս. տարվա ամբիոնի աշխատանքային պլանը:

**Լ Ս Ե Ց Ի Ն**՝ ամբիոնի հայցորդներ Մարիա Բաբայանի /գիտական ղեկավար հ.գ.դ., պրոֆեսոր Վ. Կարապետյան/ և Վիգեն Մանուկյանի /գիտական ղեկավար հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյան/ հաղորդումները իրենց ատենախոսական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Ս. Միքայելյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Քուրքչյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը և հ.գ.թ., դոցենտ Եվ. Հովհաննիսյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** ամբիոնի հայցորդներ Մարիա Բաբայանի /գիտական ղեկավար հ.գ.դ., պրոֆեսոր Վ. Կարապետյան/ և Վիգեն Մանուկյանի /գիտական ղեկավար հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյան/ ատենախոսական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

**Ը Ն Թ Ա Յ Ի Կ Հ Ա Ր Ց Ե Ր Ի Ք Ն Ն Ա Ր Կ ՈՒ Մ՝**

**Լ Ս Ե Ց Ի Ն՝** հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանի հաղորդումը էլ. կամ թղթային մատյաններ ունենալու վերաբերյալ: Լ. Արամյանը նշեց, որ համավարակի պայմաններում, հիբրիդային դասացուցակի առկայության դեպքում ներկայացվեց որ ուսումնական մասը հնարավորություն է տվել ամբիոններին և ուսումնական մասին որոշելու, որպես գործիք ունենալ կամ էլ. մատյան կամ թղթային մատյան:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., Ս. Մակիչյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Քուրքչյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** 2021-2022 ուս. տարում կիրառել թղթային մատյաններ, քանի որ դասապրոցեսը հիբրիդային եղանակով է իրականացվում և ուսանողները շաբաթական 2 օր հաճախում են համալսարան:

**Հոգեբանության ամբիոնի վարիչի պ/կ՝  
Քարտուղար՝**

**Լ.Կ. Սարգսյան  
Ա.Վ. Խաչատրյան**

2021 թ. Նոյեմբերի 9-ին տեղի ունեցավ հոգեբանության ամբիոնի նիստը  
Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Ջեկույց ավարտական, կուրսային աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ,
2. Դասագրքերի, մեթոդական ձեռնարկների վերաբերյալ հարցերի քննարկում,
3. Կրթական ոլորտի հարցերի վերաբերյալ ծրագրերի մշակում,
4. Ծրագրվող միջազգային կոնֆերանսի հետ կապված հարցերի քննարկում,
5. ԺԹ00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտության որակավորման քննության հարցաշարի հաստատում,
6. Ընթացիկ հարցերի քննարկում:

Լ Ս Ե Ց Ի Ն՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը 2021-2022 ուս. տարվա ավարտական, կուրսային աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝ հ.գ.թ., ասիստենտ Մ. Քելոյանը, հ.գ.թ., ասիստենտ Լ. Վարդանյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Քուրքչյանը, նշեցին, որ աշխատանքները ըստ սահմանված կարգի ընթանում են, սակայն կան 2 ուսանողներ ովեր չեն կապվել իրենց ղեկավարների հետ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝ 2021-2022 ուս. տարվա ավարտական, կուրսային աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացքը համարել բավարար:

Լ Ս Ե Ց Ի Ն՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը դասագիրք կամ մեթոդական ձեռնարկ ստեղծելու վերաբերյալ:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Մ. Մակիչյանը, հ.գ.թ., դոցենտ Ա. Խաչատրյանը, դասախոս Ն. Հարությունյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝ հրատարակել «Զարգացման հոգեբանություն» խորագրով գիրք: Կազմվեց աշխատանքային խումբ, որը պետք է զբաղվի գրքի կազման աշխատանքներով: Աշխատանքային խմբի անդամներ են՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյան, հ.գ.թ., դոցենտ Հ.

Պետրոսյան, հ.գ.թ., դոցենտ Լ. Քուրքչյան, հ.գ.թ., դոցենտ Ա. Խաչատրյան, հ.գ.թ., դոցենտ Եվ. Հովհաննիսյան, հ.գ.թ., ասիստենտ Մ. Քելոյան, հ.գ.թ., դասախոս Ա. Խուդոյան, դասախոս Ն. Հարությունյան:

**Լ Ս Ե Ց Ի Ն**՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը ուղղված 2021-2022 ուս. տարվա կրթական ոլորտի հարցերի վերաբերյալ ծրագրերի մշակմանը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն**՝ հ.գ.թ., դոցենտ Ս. Մակիչյանը, հ.գ.թ., դոցենտ Մ. Միքայելյանը, հ.գ.թ., դասախոս Ա. Կաթունյանը, դասախոս Ա. Գևորգյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն**՝ ձևավորել աշխատանքային խումբ կրթության ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրի մշակման և դրա հետագա քայլերի գործարկման իրականացման շուրջ: Աշխատանքային խմբի անդամներ են՝ հ.գ.թ., Լ. Սարգսյանը, հ.գ.թ., Ա. Խուդոյանը, հ.գ.թ., Ա. Կաթունյանը, դասախոս Ա. Գևորգյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը, հ.գ.թ., դոցենտ Մ. Միքայելյանը, հ.գ.թ., դոցենտ Ս. Մակիչյանը, հ.գ.թ., դոցենտ Եվ. Հովհաննիսյանը:

**Լ Ս Ե Ց Ի Ն**՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը ծրագրվող միջազգային կոնֆերանսի հետ կապված հարցերի վերաբերյալ:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն**՝ հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը, հ.գ.թ., դոցենտ Ս. Մակիչյանը, դասախոս Ա. Գևորգյանը, նշեցին, որ այս պահին ծրագրվող միջազգային կոնֆերանսի կազմակերպման նխատակով պետք է ստեղծել կազմակերպչական խումբ և հնչեցվեցին կոնֆերանսի կազմակերպման մի քանի գաղափարներ:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն**՝ ծրագրվող միջազգային կոնֆերանսի կազմակերպման համար կազմել կազմակերպչական-աշխատանքային խումբ:

**Լ Ս Ե Ց Ի Ն**՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը ԺԹ00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտության որակավորման քննության հարցաշարի հաստատման մասին:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն**՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը, հ.գ.թ., դոցենտ Մ. Միքայելյանը, նշեցին որ հարցաշարը համապատասխանում է չափանիշներին, սակայն 1 հարց կրկնվում է:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն` հաստատել ժԹ00.03 «Սոցիալական հոգեբանություն»  
մասնագիտության որակավորման քննության հարցաշարը:

Հոգեբանության ամբիոնի վարիչի պ/կ`

Լ.Վ. Սարգսյան

Քարտուղար`

Ա.Վ. Խաչատրյան

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N5

2021 թ. Նոյեմբերի 23-ին տեղի ունեցավ հոգեբանության ամբիոնի նիստը  
Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. 2021-22 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման գործընթացի կազմակերպում:

2. Ֆակուլտետում միջանկյալ քննությունների արդյունքների քննարկում:

3. Կրթության որակի վերաբերյալ հարցերի քննարկում:

4. Ասպիրանտների և հայցորդների թեմաների վերաբերյալ հաղորդումներ:

5. Մ. Մկրտումյանի հաղորդումը «Սովորողների հոգեբանական անվտանգության հմտությունների ձևավորում» խորագրով գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագիր շրջանակներում վերաբերյալ:

6. Ընթացիկ հարցերի քննարկում:

Լ Ս Ե Ց Ի Ն՝ Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը 2021-22 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման գործընթացի կազմակերպման վերաբերյալ: Ներկայացվեցին մտահոգությունները և քննարկվեցին հնարավոր վտանգները և դրանցից խուսափելու ուղիները:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝ հ.գ.թ., դոցենտ Ա. Խաչատրյանը, հ.գ.թ., ասիստենտ Մ. Քելոյանը, հ.գ.թ., հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Քուրքչյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝ 2021-22 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման գործընթացը համարել բավարար:

Լ Ս Ե Ց Ի Ն՝ Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը ուղղված 2021-2022 ուս. տարվա կրթության որակի վերաբերյալ հարցերի քննարկման վերաբերյալ: Նշվեց որ նախկին նիստերին արդեն հարցը քննարկվել է և կազմվել է աշխատանքային խումբ: Քննարկվեցին կատարված աշխատանքները:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Մ. Մակիչյանը, դասախոս Ն. Հարությունյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝ Աշխատանքային խումբի կրթության ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրի մշակման աշխատանքները համարել բավարար:

**Լ Ս Ե Ց Ի Ն՝** Լսեցին Հոգեբանության ամբիոնի դասախոս, հ.գ.դ., պրոֆեսոր Ս. Մկրտումյանի հաղորդումը «Սովորողների հոգեբանական անվտանգության հստությունների ձևավորում» խորագրով գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագիր շրջանակներում:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** հ.գ.թ., դոցենտ Ս. Մակիչյանը, հ.գ.թ., դոցենտ Ս. Միքայելյանը, հ.գ.թ., դասախոս Ա. Կաթունյանը, դասախոս Ա. Գևորգյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** Ընդունելի գիտություն:

**Լ Ս Ե Ց Ի Ն՝** Լսեցին Հոգեբանության ամբիոնի ասպիրանտների և հայցորդների ելույթները: Հայցորդներին հնչեցվեցին հարցեր, քննարկվեցին հնարավոր թերությունները:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը, հ.գ.թ., դոցենտ Ս. Մակիչյանը, դասախոս Ա. Գևորգյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** Անցկացվեց բաց քվեարկություն յուրաքանչյուր ասպիրանտի, հայցորդի ատեսատավորելու նպատակով:

**Լ Ս Ե Ց Ի Ն՝** Լսեցին Հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի Հոգեբանություն մասնագիտության 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների պաշտպանությունը կազմակերպելու վերաբերյալ:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը, հ.գ.թ., դոցենտ Ս. Միքայելյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** Սույն թվականի 23. 12.-ին նշանակել 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի Հոգեբանություն մասնագիտության 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների պաշտպանությունը: Կազմվեցին 2 հանձնաժողովներ՝

1. Ղազարյան Արմինե, Հարությունյան Նաիրա, Փալանդուզյան Հասմիկ
2. Գրիգորյան Գայանե, Ժամկոցյան Ռուզաննա, Մարտիրոսյան Ալինա

**Հոգեբանության ամբիոնի վարիչի պ/կ՝**

**Լ.Վ. Սարգսյան**

**Քարտուղար՝**

**Ա.Վ. Խաչատրյան**

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 6

**2021 թ. Դեկտեմբերի 27-ին տեղի ունեցավ հոգեբանության ամբիոնի նիստը**

### **Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝**

1. Ամբիոնի գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացում:
2. Ամբիոնում գիտական աշխատանքների կատարման արդյունքների, առկա վիճակի վերլուծություն ու քննարկում:
3. Դասալսումների արդյունքների քննարկում:
4. ՀՊՄՀ-ի դիմորդների հետ տարվող աշխատանքների վերլուծություն:
5. Ամբիոնում իրականացվող դատահոգեբանական փորձաքննությունների ընթացքի, արդյունքների վերլուծություն:
6. Կուրսային աշխատանքների պաշտպանության կազմակերպում:
7. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
8. Ընթացիկ հարցերի քննարկում:

**Լ Ս Ե Յ Ի Ն՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի վերաբերյալ հաշվետվությունը: Ամփոփ ձևով ներկայացվեցին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները, հրապարակված գիտական հոդվածները, մենագրությունները, մասնագիտական վերապատրաստումները, համագործակցությունները միջազգային ուսումնական հաստատությունների հետ, հրատարակված ուսումնամեթոդական և տեսամեթոդական ձեռնարկները: Ներկայացվեց նաև արհիոնի հայցորդների և ասպիրանտների ատեստավորման վերաբերյալ ամփոփ ինֆորմացիա:

Հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը խոսեց նաև մասնագիտական և ամնկավարժական պրակտիկաների կազմակերպչական շխատանքներ, ընթացքի և ավարտի մասին, խոսեց կուրսային աշխատանքների ընթացքի և պաշտպանությունների մասին:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., հ.գ.դ., պրոֆեսոր Մ. Մկրտումյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Քուրքյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** 2021-22 ուս. տարվա 1-ին կիսամյակի կատարված աշխատանքները համարել բավարար:

**Լ Ս Ե Ց Ի Ն՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը ուղղված 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իր կողմից կատարված դասալսումների վերաբերյալ, նշեց, որ կիսամյակի ընթացքում ժամանակ առ ժամանակ միացել է առցանց դասերին:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Մ. Մակիչյանը, դասախոս Ռ. Ժամկոցյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասընթացների վարումը և անցկացումը համարել բավարար:

**Լ Ս Ե Ց Ի Ն՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը ուղղված 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ամբիոնի մանսագետների կողմից իրականացվող դատահոգեբանական փորձաքննությունների վերաբերյալ: Նշեց, որ ընդհանուր առմամբ ամբիոնը ստացել է 25 գործ, որոնցից 12-ը կատարված է, մյուսները կատարման ընթացքի մեջ են:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** հ.գ.թ., դոցենտ Մ. Միքայելյանը, դասախոս Ռ. Ժամկոցյանը, հ.գ.թ., դասախոս Ա. Կաթունյանը, հ.գ.թ., դասախոս Ա. Ղազարյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** շաբաթական մեկ օր ընտրել հանդիպելու և դատահոգեբանական փորձաքննությունների վերաբերյալ հարցերը քննարկելու համար:

**Լ Ս Ե Ց Ի Ն՝** Հոգեբանության ամբիոնի ասպիրանտ և դասախոս Ն. Հարությունյանի «Երիտասարդ նորի նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցությունը ինքնագնահատականի վրա» խորագրով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., պրոֆեսոր Ն. Հակոբյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Քուրքչյանը, հ.գ.թ., պրոֆեսոր Մ. Մկրտումյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** Ն. Հարությունյանի «Երիտասարդ նորի նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցությունը ինքնագնահատականի վրա» խորագրով ատենախոսական աշխատանքի ընթացքը համարել բավարար:

**ԼՍ Ե Ց Ի Ն՝** Հոգեբանության ամբիոնի 1-ին կուրսի ասպիրանտ Սուսաննա Ավագյանի ատենախոսական աշխատանքի խորագրի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու հարցերը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն՝** հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Մ. Մկրտումյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն՝** հաստատել Սուսաննա Ավագյանի հետևյալ խորագիրը՝ «Ղեկավարի ոճի և մոտիվացիայի համահարաբերակցությունը աշխատանքային խմբում» Սոցիալական հոգեբանություն ԺԹ00.03 մասնագիտական թվանիշով, գիտական ղեկավար նշանակել հ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Պետրոսյանին:

Հոգեբանության ամբիոնի վարիչի պ/կ՝

Լ.Կ. Սարգսյան

Քարտուղար՝

Ա.Վ. Խաչատրյան

## Հոգեբանության ամբիոն

2022 թ. –ի հունվարի 27-ի թիվ 7-րդ նիստ

### Օրակարգ

1. 2021-22 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերլուծություն:
2. 2021-22 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպում:
3. 1-ին կիսամյակի պրակտիկայի ընթացքի վերաբերյալ հարցերի քննարկում:
4. Ամբիոնի կողմից պատրաստված գիտաուսումնական աշխատանքների հրատարակման նախապատրաստում, հարցերի քննարկում:
5. Ուսանողների հետ տարվող գիտական, ուսումնական և հասարակական աշխատանքների կազմակերպում:
6. Ամբիոնի կողմից իրականացվող սեմինարների և գիտական զեկույցների կազմակերպում:
7. Դասախոսների վերապատրաստման, դրա ուղղվածության քննարկում:
8. Ընթացիկ հարցերի քննարկում:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանի հաղորդումը 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ: Ամփոփ ձևով ներկայացվեց կիսամյակի ընթացքում քննաշրջանի արդյունքները: Քննարկվեց նաև ընթերականների քննությանը ներկա չգտնվելու պատճառները ինչպես նաև քննաշրջանի և պրակտիկայի ժամանակ ուսանողների գնահատականները և դրանց օբյեկտիվության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ.Պետրոսյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Մ.Մկրտումյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանը համարել բավարար:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ.Սարգսյանի հաղորդումը 2021-22 ուս տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ: Քննարկվեց առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և հարցաշարերի հաստատումը, որը հաստատվել է 2021թ. օգոստոսի 31-ի նիստի ժամանակ: Ամբիոնի վարիչի պաշտոնակատարի հորդորով պետք է ամբիոն ուղարկվեն 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերը թեմատիկ տրոհումները և հարցաշարերը ստուգելու համար:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Լ.Մկրտումյանը, հ.գ.թ., Լ.Արամյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Այն առարկաները, որոնք չեն ավարտվում ամփոփիչ ստուգմամբ 1-ին միջանկյալ քննությունը լինի սահմանված կարգով իսկ 2-րդ միջանկյալ քննությունը լինի թեստ կամ գրավոր աշխատանք, որը կստուգի ուսանողի գիտելիքները տվյալ առարկայի շրջանակներում:

**ԼՍԵՑԻՆ՝** Լ.Սարգսյանը ներկայացրեց ամբիոնի կողմից նախապատրաստվող գիտական աշխատանքները: Քննարկվեց գիտաուսումնական աշխատանքների հրապարակման, ուսումնական ձեռնարկների, ուսումնական ծրագրերի հրապարակման նախապատրաստման հարցերը:

Ինչպես նաև հասարակական աշխատանքների կազմակերպումը, գիտական և ուսումնական աշխատանքների կազմակերպման կարևորությունը ուսանողների հետ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հոգեբանության ամբիոնի դասախոս ասպիրանտ՝ Ն.Հարությունյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** գիտական աշխատանքների կազմակերպումը ինչպես նաև ուսանողների հետ համագործակցությունը համարել բավարար:

**ԼՍԵՑԻՆ՝** Լ. Սարգսյանի առաջարկությունը ամբիոնի կողմից իրականացվող սեմինարների և գիտական զեկույցների վերաբերյալ: Ամբիոն ներկայացվեն թե ինչ գիտական զեկույցներ են նախապատրաստվում, և ինչպիսի աշխատանքներ են կազմակերպվում պրակտիկաների շրջանակում: Ակտիվություն ցուցաբերել գիտական սեմինարների, հաղորդումների վերաբերյալ և ամբիոն ներկայցվեն: Համալսարանի 100 ամյակին նվիրված միջոցառումներում ցուցաբերել ակտիվություն: Առաջարկվեց նաև

դասախոսական անձնակազմին վերապատրաստել: Քննարկվեց թե ինչ ուղվածության վերապատրաստում է անհրաժեշտ հոգեբանության ամբիոնի դասախոսական անձնակազմին, որպեսզի այս տարի կազմակերպվի վերապատրաստում:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Մկրտումյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Մ. Մկրտումյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Արակյանը, հ.գ.թ., Ա. Կաթունյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Առաջարկել երևանյան բուհերի հետ միասին, գիտական ծրագրերի շրջանակում համագործակցել փորձի փոխանակման և դասախոսությունների, մասնակցել քննարկումների, որը վերաբերվում է առարկայական ծրագրերին:

Առաջարկվեց նաև Նեյրոֆիզիոլոգիայի, նեյրոհոգեբանության շրջանակում վերապատրաստման իրականացում: Քննարկվեց նաև հետազոտական կենտրոնների հետ համատեղ աշխատանքների իրականացման հարցը: Առաջարկվեց նաև հոգեբանական հետազոտությունների վիճակագրական վերլուծության հետ կապված իրականացնել վերապատրաստում:

**ԼՍԵՑԻՆ՝** Լ. Սարգսյանը ներկայացրեց, որ ֆակուլտետում կբացվի հոգեբանական ծառայությունների կենտրոն և լաբորատորիա ինչպես նաև «Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոն»:

Նշվեց նաև, որ համալսարանի գիտական խորհրդում հաստատվել է հոգեբանության ամբիոնի՝ Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի անվանակոչումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյան, հ.գ.թ., դոցենտ Մ. Միքայելյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Մինչև սեպտեմբեր կգործարկի հոգեբանական ծառայության կենտրոնը և հոգեբանության լաբորատորիան ինչպես նաև «Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոն»-ը:

**ԼՍԵՑԻՆ՝** Լ. Վարդանյանի «Հեքիաթի կիրառումը հոգեբանական աշխատանքում» ուսումնամեթոդական ձեռնարկի հաստատման հարցը ընթացիկ հարցերի քննարկման ժամանակ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Լ. Վարդանյանի «Հեքիաթի կիրառումը հոգեբանական աշխատանքում» ուսումնամեթոդական ձեռնարկի երաշխավորման հարցը քննարկել ֆակուլտետի գիտական խորհրդում:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանին, Հայ-ռուսական համալսարանի Հոգեբանության ամբիոնի հայցորդ Իզաբելլա Սարգսյանին թեկնածուական ատենախոսության և գիտական ղեկար նշանակելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաստատել Իզաբելլա Սարգսյանի ատենախոսության թեման՝ «Զինվորական հաստատություններում սովորողների հոգեբանական պատրաստվածությունը արտակարգ իրավիճակներին» Մոցիալական հոգեբանություն ԺԹ.00.03 մասնագիտական թվանիշով, գիտական ղեկավար նշանակել հ.գ.դ., պրոֆեսոր Սեդրակ Ադասիի Սեդրակյանին:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանին, Ն/դ մանկավարժության և մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Մ.Հ. Մակոյանի դիմումն այն մասին, որ հայցորդը ցանկանում է տեղափոխվել Հոգեբանության ամբիոն:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Ընդունել դիմունը և առաջիկա նիստերին քննարկել Մ.Հ. Մակոյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավար նշանակելու հարցը:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանին, Ա. Խուդոյանի «Երեխաների և դեռահասների հետ աշխատանքի արտ-թերապևտիկ տեխնիկաներ» մեթոդական ձեռնակի վերաբերյալ գրախոսներ նշանակելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Գրախոսներ նշանակել հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Լ. Մկրտումյանին, մյուս երկու օրինակները ուղարկել արտաքին գրախոսության, կիրառական հոգեբանության ամբիոն և ԵՊՀ Մոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոն:

**ԼՍԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանին, Առաքելյան Քնարիկի Психологические факторы внутрисемейной виктимизации личности» վերնագրով ատենախոսության նախապաշտպանության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, հ.գ.թ., դասախոս Ա. Ավագյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** գրախոսներ նշանակել հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հ.գ.դ. Մ. Մկրտումյանին և դասախոս, հ.գ.թ. Ա. Ավագյանին:

**ԼՍԵՑԻՆ՝** Ն. Հարությունյանի ատենախոսության վերաբերյալ հաղորդումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, հ.գ.թ., դասախոս Ա. Կաթունյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Մ. Մկրտումյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** առաջարկվեց Ն. Հարությունյանի ատենախոսության հետազոտության բաժնում կատարել փոփոխություններ:

## **Հոգեբանության ամբիոն**

**2022 թ. –ի փետրվարի 22-ի թիվ 8-րդ նիստ**

### **Փ Ե Տ Ր Վ Ա Ր**

1. Ամբիոնում կատարվող գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում, արդյունքների քննարկում, հանձնարարականների առաջադրում:
2. 2021-22 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
3. Մանկավարժական պրակտիկայի իրականացման նախապատրաստում /ծրագրային փաթեթների քննարկում/:
4. Ավարտական և կուրսային աշխատանքների, մագիստրոսական թեզերի հետազոտությունների կազմակերպման, ընթացքի վերլուծություն:
5. Հանրակրթական դպրոցներում շրջանավարտների և դիմորդների հետ համապատասխան աշխատանքների կատարում:
6. Ասպիրանտների և հայցորդների թեմաների վերաբերյալ հաղորդումներ:
7. Ընթացիկ հարցերի քննարկում:

Ամբիոնի նիստը տեղի ունեցավ առցանց ներկա էին 20 դասախոս:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը ներկայացրեց ամբիոնում կատարվող գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը, քննարկվեց արդյունքները և տրվեց նոր հանձնարարականներ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 100 ամյակին նվիրված միջոցառումներին ցուցաբերել ավելի մեծ ակտիվություն:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը ամփոփեց 2021-22 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Մ. Մկրտումյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանը համարել բավարար:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը ներկայացրեց մանկավարժական պրակտիկայի նախապատման աշխատանքները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Եվ. Հովհաննիսյանը, հ.գ.թ., Լ. Վարդանյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Մանկավարժական պրակտիկայի իրականացման նախապատրաստման աշխատանքները համարել բավարար:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը ներկայացրեց ավարտական և կուրսային աշխատանքների, մագիստրոսական թեզերի հետազոտությունների ընթացքի իրականացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Հ. Պետրոսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Ավարտական և կուրսային աշխատանքների, մագիստրոսական թեզերի հետազոտական աշխատանքներին ավելի մեծ ժամանակ հատկացնել:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյան և ԿՀՍ ֆակուլտետի դեկան Ռ. Պետրոսյանը ներկայացրեցին, առաջարկեցին ծրագրեր

հանրակրթական դպրոցներում շրջանավարտների և դիմորդների հետ համապատասխան աշխատանքների, միջոցառումների կատարման վերաբերյալ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Լ. Մկրտումյանը, հ.գ.թ., Ա. Կաթունյանը, դասախոս Ա. Գևորգյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Մշակել ծրագրեր համապատասխան ժամկետներում կազմակերպել և իրականացրել հանրակրթական դպրոցներում շրջանավարտների և դիմորդների հետ:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը ներկայացրեց ամբիոնի հայցորդ Աննա Շահնագարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Ա. Խաչատրյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Մ. Մկրտումյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաստատել Աննա Շահնագարյանի ատենախոսության թեման՝ «Պետական կոոպորացիաների ղեկավարների կորպորատիվ ուսուցման ծրագրային մոդելավորման սոցիալ-հոգեբանական պրոբլեմները, ՀՀ-ում» Սոցիալական հոգեբանություն ԺԹ.00.03 մասնագիտական թվանշով, գիտական ղեկավար նշանակել հ.գ.թ., դոցենտ Ռ. Պետրոսյանին:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը ներկայացրեց ամբիոնի հայցորդ Անահիտ Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության «Պատերազմական հետտրավմատիկ սթրեսի սոցիալ-հոգեբանական դրսևորումները աղետի գոտու բնակչության մոտ» թեման:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ա. Խաչատրյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Մ. Մկրտումյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Թեման վերանայել, խմբագրել և հաստատման ներկայացնել հաջորդ նիստերում:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝

Լ.Կ. Սարգսյան

Քարտուղար՝

Ա.Գ.Շահնագարյան

**Հոգեբանության ամբիոն**  
**2022 թ.-ի մարտի 22-ի թիվ 9-րդ նիստ**

**Մ Ա Ր Տ**

1. Մանկավարժական պրակտիկայի ընթացքի և դրա արդյունավետ իրականացման հետ կապված հարցերի քննարկում և առաջարկությունների ներկայացում:
2. Կուրսային և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ ղեկավարների ամփոփ գեկույցի ներկայացում, նախապաշտպանությանը վերաբերող հարցերի քննարկում:
3. 2022-22 ուս. տարվա համահամալսարանական, կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի ընդունելության առարկայի հարցաշարի քննարկում և հաստատում:
4. Ասպիրանտների և հայցորդների թեմաների վերաբերյալ հաղորդումներ:
5. Ընթացիկ հարցերի քննարկում:

**ԼՄԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանին մանկավարժական պրակտիկայի ընթացքի և դրա արդյունավետ իրականացման հետ կապված հարցերի ներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Եվ. Հովհաննիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Մանկավարժական պրակտիկայի ընթացքի իրականացման հետ կապված հարցերը համարել բավարար:

**ԼՄԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պաշտոնակատար հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը ներկայացրեց կուրսային և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ ամփոփ զեկույց և նախապաշտպանությանը վերաբերող հարցերի քննարկում:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** հ.գ.թ., դոցենտ Ս. Մակիչյանը:

